Կ-544-30.03.2023-ԳԿ-011

Նախագիծ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) 7-րդ ***պարբերությունից*** հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ***պարբերություններ.***

«ճարտարագիտատեխնիկական աշխատող՝ գիտական ***կամ գիտատեխնիկական*** կազմակերպությունում կամ բուհում գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացմանը նպաստող և գիտական արդյունքի ստեղծման գործընթացում ներգրավված անձ.

գիտամանկավարժական (գիտակրթական) աշխատող՝ պետական հավատարմագրում անցած բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսական կազմի աշխատող, որն իրականացնում է նաև գիտական և գիտատեխնիկական գործունեություն.».

2) 8-րդ ***պարբերությունից*** հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ***պարբերություններ.***

«գիտական դրամաշնորհ՝ Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կամ իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններով գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներին գիտական հետազոտությունների իրականացման նպատակով անհատույց տրամադրվող ֆինանսական կամ այլ միջոցներ.

գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ՝ տվյալների հավաքման, վերլուծության և տեղեկատվության տարածման միասնական էլեկտրոնային համակարգ, որը ներառում է տեղեկություններ գիտական կազմակերպությունների, դրանց ենթակառուցվածքների, կառավարման, տնտեսական և հետազոտական գործընթացների, ինչպես նաև աշխատողների (այդ թվում՝ ոչ գիտական) մասին, որոնք անհրաժեշտ են պետական բյուջեի հաշվին ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և գնահատման ամբողջ գործընթացը լիարժեք կազմակերպելու համար:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածում 3-րդ մասը՝

1) «բ» կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «գ» կետով.

«գ) անցնել ատեստավորում՝ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանության հավաստման նպատակով:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ և 10-րդ մասերով.

«9. Կառավարությունը հաստատում է գիտական պետական կազմակերպությունների տեսակները, դրանց կառուցվածքներին ներկայացվող պահանջները և դասակարգման չափանիշները՝ ներառյալ գործունեության նկատմամբ ակնկալվող վերջնարդյունքների ցուցանիշները:

10. Պետության կողմից հիմնադրված գիտական կազմակերպության ղեկավարի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գիտական կազմակերպության ղեկավարի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝ նա դիմում է այդ մասին, լրացել է նրա 65 տարին, դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող կամ մահացած»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ՀՀ ԳԱԱ» բառերը փոխարինել «Ակադեմիա» բառով.

Հոդված 5. Օրենքի 10-րդ ***հոդվածի 1-ին մասում*** «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «,«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»» բառերը:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «և գիտալուսավորչական» և «գիտությունների հասարակական ակադեմիաներ,» բառերը.

2) 2-րդ մասից հանել «ներառյալ՝ գիտությունների հասարակական ակադեմիաներին,» բառերը:

Հոդված 7. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությունում «ԳԱԱ» բառը փոխարինել «Ակադեմիայի» բառով:

Հոդված 8. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա. «բ» կետում «հայագիտության» բառից հետո լրացնել «և գիտության այլ բնագավառների» բառերը,

բ. «է» կետում «կարգի» բառը փոխարինել «կարգերի» բառով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժ» կետով՝

«ժ) Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցի հաստատումը:».

3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 15.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 15.1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն**

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ղեկավարում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահը:

2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն՝

1) մասնակցում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում կառավարության քաղաքականության մշակմանը, ինչպես նաև մշակում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծեր.

2) սահմանված կարգով մասնակցում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտների վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակմանն ու քննարկմանը.

3) հաստատում է գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի վարման կարգը, դրա հիման վրա իրականացնում է գիտական կամ գիտատեխնիկական արդյունքների վերաբերյալ տվյալների հավաքում, գիտաչափական վերլուծություն, հաշվառման ամբողջական համակարգի ձևավորում և վարում.

4) իր իրավասության սահմաններում իրականացնում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտների բյուջետային գործընթացը.

5) ստեղծում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդներ և կազմակերպում է դրանց աշխատանքները.

6) հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական աստիճանները՝ հիմք ընդունելով մասնագիտական խորհուրդների որոշումները և որակավորման գործի ուսումնասիրությունը.

7) հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական կոչումները՝ հիմք ընդունելով բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական (գիտատեխնիկական) խորհուրդների որոշումներն ու գործի ուսումնասիրությունը.

8) նախկին ԽՍՀՄ գիտական աստիճանի վկայագրերի հիման վրա հանձնում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրեր.

9) հաստատում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգը.

10) հաստատում է ատենախոսությունների արդյունքներն ու դրույթները հրապարակելու համար սահմանվող գիտական պարբերականների ցուցակում ընդգրկվելու չափանիշները.

11) իր կանոնադրական գործառույթներն ապահովելու նպատակով կարող է ստեղծել մասնագիտական փորձագիտական խորհուրդներ, մրցութային հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, ինչպես նաև կարող է ձևավորել մասնագիտական և խորհրդակցական մարմիններ՝ հաստատելով դրանց աշխատակարգը և անվանական կազմը:»:

Հոդված 10. Օրենքի 15.2-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) 8-րդ մասում և 9-րդ մասին հաջորդող պարբերությունում «Բարձրագույն որակավորման կոմիտեն» բառերը փոխարինել «Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն» բառերով.

2) 9-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.1-ին մասով.

«9.1. Գիտական մասնագիտությունների անվանացանկը, որոնց գծով շնորհվում են գիտական աստիճաններ և գիտական կոչումներ՝ հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:»:

Հոդված 12. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի ատեստավորումն իրականացվում է առնվազն հինգ տարին մեկ անգամ: Ատեստավորումը նպատակ ունի՝ գնահատել գիտական աշխատողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը և նրա կողմից ստացված գիտական արդյունքները՝ գիտական աշխատողի համապատասխանությունը նրա զբաղեցրած պաշտոնին պարզելու համար:».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատում է կառավարությունը:»:

Հոդված 13. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «, գիտության ոլորտում աշխատանքային ստաժի» բառերը.

2) 2-րդ մասում «լրացուցիչ վարձատրությունից» բառերը փոխարինել «հավելավճարից» բառով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին մասով.

«2.1. Գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճար տրամադրվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված և առնվազն աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատող գիտական աշխատողներին, որի տրամադրման չափը և կարգը սահմանում է կառավարությունը:»:

Հոդված 14. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի «գ» կետում «պայմանագրային (թեմատիկ)» բառերը փոխարինել «գիտական դրամաշնորհային» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-7-րդ մասերով.

«5. Կառավարությունը հաստատում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային և գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևերով պետական ֆինանսավորման կարգերը, որոնք նկարագրում են ֆինանսավորման ամբողջական գործընթացը, գիտական և գիտատեխնիկական փորձաքննության տեսակները և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման գործիքները:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ֆինանսավորման ձևերով իրականացվող մրցութային ծրագրերի հրավերների փաթեթները և մրցույթների արդյունքները սահմանված կարգով հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

7. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևով մրցութային ծրագրերի շրջանակներում մեկ ամսից ավել տևողությամբ մասնագիտական վերապատրաստման նպատակով գործուղումների համար օրապահիկի և գիշերակացի փոխհատուցման արժեքները սահմանվում են մրցութային ծրագրերի պայմաններով:»:

Հոդված 15. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ***նորմատիվ*** իրավական ակտերն ընդունվում են մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

3) 7-րդ ~~կետից~~ ***պարբերությունից*** հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ~~կետեր~~ ***պարբերություններ.***

«ճարտարագիտատեխնիկական աշխատող՝ գիտական ***կամ գիտատեխնիկական*** կազմակերպությունում կամ բուհում գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացմանը նպաստող և գիտական արդյունքի ստեղծման գործընթացում ներգրավված անձ.

գիտամանկավարժական (գիտակրթական) աշխատող՝ պետական հավատարմագրում անցած բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսական կազմի աշխատող, որն իրականացնում է նաև գիտական և գիտատեխնիկական գործունեություն.».

4) 8-րդ ~~կետից~~ ***պարբերությունից*** հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ~~կետեր~~ ***պարբերություններ.***

«գիտական դրամաշնորհի՝ Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կամ իրավաբանական ու ֆիզիկական

անձանց կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններով գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներին գիտական հետազոտությունների իրականացման նպատակով անհատույց տրամադրվող ֆինանսական կամ այլ միջոցներ.

գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ՝ տվյալների հավաքման, վերլուծության և տեղեկատվության տարածման միասնական էլեկտրոնային համակարգ, որը ներառում է տեղեկություններ գիտական կազմակերպությունների, դրանց ենթակառուցվածքների, կառավարման, տնտեսական և հետազոտական գործընթացների, ինչպես նաև աշխատողների (այդ թվում՝ ոչ գիտական) մասին, որոնք անհրաժեշտ են պետական բյուջեի հաշվին ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և գնահատման ամբողջ գործընթացը լիարժեք կազմակերպելու համար:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածում 3-րդ մասը՝

3) «բ» կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «գ» կետով.

«գ) անցնել ատեստավորում՝ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանության հավաստման նպատակով:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում՝

3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ և 10-րդ մասերով.

«9. Կառավարությունը հաստատում է գիտական պետական կազմակերպությունների տեսակները, դրանց կառուցվածքներին ներկայացվող պահանջները և դասակարգման չափանիշները՝ ներառյալ գործունեության նկատմամբ ակնկալվող վերջնարդյունքների ցուցանիշները:

10. Պետության կողմից հիմնադրված գիտական կազմակերպության ղեկավարի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գիտական կազմակերպության ղեկավարի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝ նա դիմում է այդ մասին,

լրացել է նրա 65 տարին, դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող կամ մահացած»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում՝

2) 1-ին մասում «ՀՀ ԳԱԱ» բառերը փոխարինել «Ակադեմիա» բառով.

~~3) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2-4-րդ մասերով.~~

~~«2. Ակադեմիայի կանոնադրությունը՝ ներառյալ կառավարման և գործունեության առանձնահատկությունները, համակարգում ներառված կազմակերպությունների ցանկը և դրանց կանոնադրությունների օրինակելի ձևը հաստատում է կառավարությունը:~~

~~3. Ակադեմիան իր կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է կառավարման խորհուրդ՝ ներառելով Ակադեմիայից, կրթության, գիտության և էկոնոմիկայի ոլորտների լիազոր մարմիններից առաջադրված ներկայացուցիչներ, որի միջոցով իրականացնում է համակարգի կազմակերպությունների ընդհանուր կառավարումը, այդ թվում՝ կազմակերպությունների կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կառավարման մարմինների ձևավորումը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:~~

~~4. Ակադեմիան ունի ղեկավար կազմ, որն իրականացնում է ակադեմիայի գիտական, գիտատեխնիկական և գիտաօժանդակ գործունեության ընթացիկ ղեկավարումը: Ղեկավար կազմի մեջ մտնում են Ակադեմիայի նախագահը, փոխնախագահը, ակադեմիկոս քարտուղարը, նախագահի տեղակալները և բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարները: Ակադեմիայի ղեկավար կազմում ընդգրկված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ՝ իր դիմումի համաձայն կամ մահվան դեպքում կամ լրացել է նրա 75 տարին կամ դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող»:~~

Հոդված 5. Օրենքի 10-րդ ***հոդվածիում 1-ին մասում*** «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «,«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»» բառերը:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում՝

3) 1-ին մասից հանել «և գիտալուսավորչական» և «գիտությունների հասարակական ակադեմիաներ,» բառերը.

4) 2-րդ մասից հանել «ներառյալ՝ գիտությունների հասարակական ակադեմիաներին,» բառերը:

Հոդված 7. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությունում «ԳԱԱ» բառը փոխարինել «Ակադեմիայի» բառով:

Հոդված 8. Օրենքի 14-րդ հոդվածում՝

4) 1-ին մասի՝

ա. «բ» կետում «հայագիտության» բառից հետո լրացնել «և գիտության այլ բնագավառների» բառերը,

բ. «է» կետում «կարգի» բառը փոխարինել «կարգերի» բառով.

5)1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժ» կետով՝

«ժ) Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցի հաստատումը:».

6)2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 15.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 15.1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն**

3. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ղեկավարում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահը:

4. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն՝

12) մասնակցում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում Կկառավարության քաղաքականության մշակմանը, ինչպես նաև մշակում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծեր.

13) սահմանված կարգով մասնակցում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտների վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակմանն ու քննարկմանը.

14) հաստատում է գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի վարման կարգը, դրա հիման վրա իրականացնում է

գիտական կամ գիտատեխնիկական արդյունքների վերաբերյալ տվյալների հավաքում, գիտաչափական վերլուծություն, հաշվառման ամբողջական համակարգի ձևավորում և վարում.

15) իր իրավասության սահմաններում իրականացնում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտների բյուջետային գործընթացը.

16) ստեղծում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդներ և կազմակերպում է դրանց աշխատանքները.

17) հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական աստիճանները՝ հիմք ընդունելով մասնագիտական խորհուրդների որոշումները և որակավորման գործի ուսումնասիրությունը.

18) հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական կոչումները՝ հիմք ընդունելով բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական (գիտատեխնիկական) խորհուրդների որոշումներն ու գործի ուսումնասիրությունը.

19) նախկին ԽՍՀՄ գիտական աստիճանի վկայագրերի հիման վրա հանձնում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրեր.

20) հաստատում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգը.

21) հաստատում է ատենախոսությունների արդյունքներն ու դրույթները հրապարակելու համար սահմանվող գիտական պարբերականների ցուցակում ընդգրկվելու չափանիշները.

22) իր կանոնադրական գործառույթներն ապահովելու նպատակով ***~~Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն~~*** կարող է ստեղծել մասնագիտական փորձագիտական խորհուրդներ, մրցութային հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, ինչպես նաև կարող է ձևավորել մասնագիտական և խորհրդակցական մարմիններ՝ հաստատելով դրանց աշխատակարգը և անվանական կազմը:»:

Հոդված 10. Օրենքի 15.2-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքի 16-րդ հոդվածում՝

3) 8-րդ մասում և 9-րդ մասին հաջորդող պարբերությունում «Բարձրագույն որակավորման կոմիտեն» բառերը փոխարինել «Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն» բառերով.

4) 9-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.1-ին մասով.

«9.1. Գիտական մասնագիտությունների անվանացանկը, որոնց գծով շնորհվում են գիտական աստիճաններ և գիտական կոչումներ՝ հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:»:

Հոդված 12. Օրենքի 17-րդ հոդվածում՝

3) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի ատեստավորումն իրականացվում է առնվազն հինգ տարին մեկ անգամ: Ատեստավորումը նպատակ ունի՝ գնահատել գիտական աշխատողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը և նրա կողմից ստացված գիտական արդյունքները՝ գիտական աշխատողի համապատասխանությունը նրա զբաղեցրած պաշտոնին պարզելու համար:».

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական ~~կադրերի~~ պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատում է կառավարությունը:»:

Հոդված 13. Օրենքի 19-րդ հոդվածում՝

4) 2-րդ մասից հանել «, գիտության ոլորտում աշխատանքային ստաժի» բառերը.

5) 2-րդ մասում «լրացուցիչ վարձատրությունից» բառերը փոխարինել «հավելավճարից» բառով.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին մասով.

«2.1. Գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճար տրամադրվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված և առնվազն աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատող գիտական աշխատողներին, որի տրամադրման չափը և կարգը սահմանում է կառավարությունը:»:

Հոդված 14. Օրենքի 23-րդ հոդվածում՝

3) 4-րդ մասի «գ» կետում «պայմանագրային (թեմատիկ)» բառերը փոխարինել «գիտական դրամաշնորհային» բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-7-րդ մասերով.

«5. Կառավարությունը հաստատում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային և գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևերով պետական ֆինանսավորման կարգերը, որոնք նկարագրում են ֆինանսավորման ամբողջական գործընթացը, գիտական և գիտատեխնիկական փորձաքննության տեսակները և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման գործիքները:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ֆինանսավորման ձևերով իրականացվող մրցութային ծրագրերի հրավերների փաթեթները և մրցույթների արդյունքները սահմանված կարգով հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

7. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևով մրցութային ծրագրերի շրջանակներում մեկ ամսից ավել տևողությամբ մասնագիտական վերապատրաստման նպատակով գործուղումների համար օրապահիկի և գիշերակացի փոխհատուցման արժեքները սահմանվում են մրցութային ծրագրերի պայմաններով:»:

Հոդված 15. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ***նորմատիվ*** իրավական ակտերն ընդունվում են մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (Կ-544-30.03.2023-ԳԿ-011/0) օրենքի առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացություն	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 1, առաջին մաս,	Նախագծի 1-ին և 2-րդ «կետից» բառը փոխարինել «պարբերությունից», իսկ «կերտեր» բառը՝ «պարբերություններ» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
	ՀՀ ԱԺ պատգամավոր Նարեկ Բաբայան		10. Պետության կողմից հիմնադրված գիտական կազմակերպության ղեկավարի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գիտական կազմակերպության ղեկավարի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝ նա դիմում է այդ մասին, լրացել է նրա 65 տարին, դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող կամ մահացած»:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր	Հոդված 4, 2-րդ կետ	Լրացվող 2-4-րդ մասերը հանել	Ընդունվել է	Ընդունվել է

	Սիսակ Գաբրիելյան				
	ՀՀ կառավարություն	Հոդված 9, 2-րդ մաս, 11-րդ կետ	Հանել «Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 11, 1-ին կետ	«հաջորդող» բառը փոխարինել «երկրորդ» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
4	ՀՀ կառավարություն	Հոդված 12-րդ, 3-րդ մաս	Հանել «կադրերի» բառը	Ընդունվել է	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	Հոդված 15	Լրացնել «իրավակա» բառից առաջ լրացնել «նորմատիվ» բառը	Ընդունվել է	Ընդունվել է